

ազգի և հայրենեաց՝ յայսմիկ հգնաժամու ազգիս, յորժամ լընալ և այլ ևս բարձի թողի լեալ է բազմաչարչար ազգ մեր ի ըրիստոնեայ կոչեցեալ ազգաց Եւրոպականաց, միանգամ ընդմիջու գործնացուց ազգային համերաշխութեամբ ի կանգնու մն իրոծանեալ տանն Հայկալ և ի նորոգումն յաւէտ խաթարեալ փառաց ըաղցրանուն և զրախտանման Հայրենեաց մերոց, զի ըստ իմաստաւից բանից անմահ ընթերթողին « եղբարք եմք մեք՝ թէպէտ և մրրկաւ եմք զստեալք »: Մաղթելով ի յերկնից բաղձալին աէր և միաբանութիւն վասն բազմարկածեան ազգիս Հայոց անդրանկի՝ մնամ ցանկալի վերականգման տառապեալ և նահատակ ազգիս ակընկառոյց՝

ՄԵՐՈՒՆԳ Յ. ՍԵՐՈՒՆԵ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՁԵՆԱԳԻՐՆԵՐ

ԼՈՒՏՈՆԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Սերով կը հիւրընկալենք Մեծ. Ս. Տէր Մ. Գրիգորեանի այս յօդուածը՝ որ զխաւորապէս լայնօրէն բաւարարական և հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ իր ներկայացուցած զրգարին վրայ, մինչ անոր մասին ըստ քիչ և համառօտ ծանօթութիւն կը գտնենք Հայագիտ. Կոնիքիբի կազմած Յուլական մէջ (Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum by Frederick Cornwallis Conybeare. London 1913. Add. 19727. էջ 2. ԽՄԲ.

Հարիւր վաթսուոն և չորս Հայկական Հին Ձեռագիրների ընտիր հաւաքածոյ մի՛ խնամքով պահած ունի այսօր Լոնտոնի հանրածանօթ Բրիտանական Թանգարանն, որք թէ՛ ըստ գեղարուեստական հնագրութեան և թէ՛ ըստ զարդանկարչութեան՝ սքանչելի օրինակներ են իւրեանց հազուադիւս կարգին մէջ, Եւ բնականաբար՝ երբ Հայը մի սպասելի գուրգուրանքով և սրտի մտօք՝ աչքի տակ է անցնում այդ հինաւորց հայկական աշխատութիւնը՝ այնպիսի մի եռացող բնիկ զգացումներով համակոււմ է՝ որ գերազանցապէս

անհասանելի են օտարաց հասկացողութեան, որք գրեթէ ըստ մեծամասնութեան լուկ հետաքրքրութեամբ և սառն բաղդատական աչօք են վերաբերում առ նոսաւ թո՛ղ պատկառանք մատչինք այդ հոգեպարար նշխարներին և զարմանահիւս հրեշտորդը սոփեբից: Զգուշութեամբ թըղթատենք այդ նուիրական էջերն: Ուշադրութեամբ կարդանք, հանդարտութեամբ ըննենք և պարծանօք հիւաններ: Ինչ ջերմեանդ հոգւով և անսպառելի կամաց զօրութեամբ, ինչ անդուլ աշխատութեամբ և նուիրական անխառն եռանդեամբ, այդ հեռաւոր մթին դարերում, երբեմն բարեգուշակ, բազմիցս դժոխային չարաբաստիկ հանգամանօք շրջապատեալ, Վանքում և Անապատում, ցորեկն՝ արևուն բնական լոյսով, գիշերն՝ ձիթածրագլի աղօտ լոյսով, որչափ համբերատար տընութեամբ վաստակեցան՝ մինչև կատարիլազործեցին այդ զորեկ զարմանալի գանձերի կտորներն: Նստեալ ծնգնածալ ի գետին՝ իւրեանց անբարեկեցիկ խցին մէջ՝ զուրկ ի կահից և հոլանի ի կարասեաց, անփառունակ փայտակերտ փոքրիկ « զազգային » ի հանդէպ սիրտն համակեալ հախ և դողի՝ յերկիւղէ մշտապատրաստ բռնաւորաց, բայց յոյսն առ Աստուած. գրիչն եղգնեալ կամ փետրեայ՝ սրեալ պատշաճաւոր ըստ հաճոյից. մեղանն վճիտ՝ կարմիր և սև, դեղին և կապոյտ, ինքեանք բաղադրեալ ի բուն տարրականէն. մագաղաթ և թուղթ անձամբ յօրինեալ և յղեալ. ներկն ոսկեգոյն, արծաթագոյն, ձիւրանի և լազուրաթի՝ իւրեանց իսկ ձեռագործ. իւրեանց ուղեղն՝ իւրեանց բնապարգև զեկավար, իւրեանց մատունն՝ իւրեանց ճարտարարուեստ մեքենայագործք. անփոյթ և անփորձ աշխարհիս վայելչութիւններից, Հաւատք, Յոյս և Մէջ իւրեանց կենաց հատոր, ամսներ և տարիներ անձանձիր զրեցին ու գրեցին այդ հեզահոգի « անուամբ և եթ » քահանայներն, խղճամիտ « սուտանուն » զալիւրներն, եւ « անիմաստ » ծաղիկողքն, իւրեանց անմեռանելի վրձինով և անթառամելի երփներանգ թոյրերով, զարդարեւ

ցին իմաստալից զունագեղ խորաններով, զարդապանոյն սիններով, շաղափր, ծաղկագիր, թռչնագիր գլխատառերով, խորհրդաւոր մանրանկարներով, և զեղանսիլ քրիստոնէական պատկերներով : Չափ չունէին անձին խոնարհութեան և քաջ գիտակ էին աշխարհիս ունայնու թեանց — « Եւ ո՛չ շինեալ եմ կահ ոսկոյ ի յականէ կամ յարծաթոյ, այլ եմ շարեալ խուր խոտոյ, փայտ և եղջ լուցցի հրոյ » : Եւ ինչ բաւական համարէին որպէս իւրեանց վարձատրութիւն : Ո՛չ փառք և պատիւ, հռչակ և ճոխութիւն, այլ լոկ « Արդ աղաչեմ զամենեանս ոյք հանդիպիք այսմ զրոց, յիշեսցիք ի տէր զգրողս սորա եւ զստացաւոյս » : Ուստի և մեք պատկառանք յարեմք. Յիշեալ լիջիք և երանեալք :

Անտարակոյս՝ Սուրբ Էջմիածնի, Երուսաղէմի և Սուրբ Ղազարու մեր Հայկական Գրադարանների ճոխագոյն զանձերի հետ բաղդատելով՝ Բրիտանական թանգարանի սոյն հաւաքածոյն սակաւաթիւ համարելի է, բայց մտաբերելով որ իւրաքանչիւր մասեան՝ որպէս և միւս ժողովածու սոփերք՝ թանգարանի վարչութիւնն մասնաւոր քննական դատողութեամբ ձեռք բերած է, կարող ենք ասել՝ լինել իւրեանց տեսակներին մէջ, եզակի եթէ ոչ անզուգական : Խորհեցեալ թերևս հակիրճ և հետեւաբար ընդհանուր տեսութիւն մի սորին առնչութեամբ՝ ունենայ իւր շահեկանութիւն մեր հայագիւ հնասիրաց համար :

Վենետիկ Սուրբ Ղազարու պատկառելի Միաբանութեան ութսունամեայ ազգօգուտ Ռազմավեպ հանդիսի, 1921 տարւոյ, համարների միոյն մէջ հանուրթեամբ կարդացի երկու Գրախօսականներ, տողուած տտարազգի բանիբուն իմաստասէրներէ, վերաբերութեամբ Սուրբ Ղազարու Գրադարանի յաւել քան 2,300 Զեռագիրների Մայր Բուցակի Առաջին հատորոյ հրատարակութեան, արդիւնք՝ հոյակապ երկասիրութեան մեղուաջան բանասէր՝ երիցս ողբացեալ ներհուն Հայր Բարսեղի Սարգիսեան, Երանի թէ ժառանգէի ձեռագրաց բացատրու-

թեանց և մեկնաբանութեանց սոյն Գամաղիէլի մի հարիւրերորդ հմտութիւն և զրչի կրողն, որով մարթնայի վայելչապէս և ըստ արժանեաց՝ մանրամասնութեն և լիուլի նկարագրել զիմ յանձն առեալն : Ապաքն՝ այդչափն իսկ պակասելով ինձանէ՝ բաւարար զիս պիտի կացուցանեմ փոխանակել լիովինն ընդ փանաքի համառօտիս :

Ըստ արդէն տպագրեալ մէկ ցուցակի և զեռանցուցակ շատ մի յաւելորդից, զորս անձամբ հետազօտեցի, յիշեալ ձեռագիրներն կարելի է դասաւորել ըստ հետեւելոյն .

	հատ.
Հին և Նոր կտակարան	1
Նոր կտակարանք	26
Սաղմոսք	4
Ճաշոց գիրք	1
Քրիստոնէական վարդապետութիւն (Հալցիւ և պատասխանիւ)	1
Կարգ և Արարողութիւնք Աստուածային Պաշտամանց հանդերձ մեկնաբանութեամբ, Մաշտոց, Աղօթագիրք, և այլն	13
Մանրուսմունք	2
Կանոնք Զեռնադրութեան և Խորհրդականք	4
Շարականք	11
Գանձարանք — Մեղեդիք, Տաղք և Յորդորակք	5
Գիրք Կանոնականք — Troparia	3
Ժամագիրք և Պարզատոմարք	6
Յայսմաւուրք	4
Տոնացոյցք	4
Մեկնութիւնք Կտակարանի, Քարոզգիրք, Հարանց Աստուածաբանութիւնք	15
Վարք Սրբոց. Երկրորդական Սուրբ Գիրք (Apocrypha)	8
Տրամաբանութիւն	1
Կրօնական և Բարոյական Գործք	8
Մի հատոր Կոնդակք	1
Ծանոթ լուսնայի	118

հատ.	
Եստույ տարեայ	118
Բանաստեղծութիւնք, Զրոյցք, Առակախօսութիւնք (Apologue)	11
Պատմութիւնք և Աշխարհագրութիւնք	9
Քերականութիւնք և Բառարանք	9
Աստեղագրանութիւն, Աղթարք, Բըժըշկարան, Հմայք, Գուշակութիւնք	9
Երկու մեծ հատորք, բովանդակելով երեք հարիւր և քսան Հայերէն նամակներ, պարտամուրհակներ, բեռնագիրներ, հաշուեցոյցք, կտակներ և այլ թուղթեր, գրուած Նոր Զուլայէն (Ապակաւ), Բասրաէն, Սուրաթից, Մաղրաւից և Կալկաթաից, 1733 մինչև 1748 տարիներում *	2
Այլևայլ գործք և գրութիւնք	6
Ընդ ամենայն	164

* [Երանօրոյիս. — Այս երկու հատորներն կրեն թուանշան *Lansdowne* 1074 և 1078: Յամին 1746, մինչդեռ Գաղղիացիք և Անգղիացիք պատերազմէին միմեանց ընդդէմ՝ Անգղիացի Ծովապետն Գրիֆին (Admiral Griffin)՝ Հնդկական Ովկիանոսում բռնագրաւեց մի առաջատանաւ Սանտա Կատարինա անուամբ, զոր Սպանիացի մի ընկերութենէ ունենց Հայ վաճառականներ վարձելով և բեռնաւորեալ արծաթիւ, Բասրաէն նաւորդութեան մէջ էր առ Կալկաթա: Յամին 1751, յիշեալ հայ վաճառականներն դատ բացան՝ Լոնտոնի մէջ՝ Անգղիական տէրութեան ընդդէմ, պահանջելով կամ զոհաբացուիչ փախարհութիւն ըստ տեսակին, կամ իւրեանց ապրանքաց արժէքն: Սոքին երեք հարիւր և քսան նամակներ և այլևայլ թղթերն յանդիման բերուեցան ի նպաստ իւրեանց դատին: Ի լրումն դատավարութեան՝ ա-

ռաջին Լորդ Լանդաուն ձեռք բերեց այս նամակներն, և վերջ ի վերջոյ՝ նուիրեց Բրիտանական Թանգարանին:

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՐԵԱՆ,
(Շարունակելի)

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՔ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

Յարգելի Տօքթ. Վահր. Յ. Թորոքման Պաղարիս մէջ իր բնակութեան պարագային օգտուելով, միանգամայն արգիւնագործելու դիտամբ իր ժամերը յօգուտ Հայ Բանասիրութեան՝ կատարեց «ԲԱՋՄԱՎԷՊ»-ի համար՝ Մայրավանքի բժշկական ձեռագրաց մասին ուսումնասիրութիւն մը՝ հետեւալ ընծայականով. «Կը եռօրեւ Յիշատակին վաղածեռի թարեկամիս ՀԱՅՐ ԱՐՄԵՆԻ ՍՈՒՐԵԱՆ, քաղաքապետի վարդապետին Միտրաբեան վեհապետին, որ առաջին անգամ 1881-ին փորձեց գրել Հայ Բժշկական Պատմութիւնը, որովհետեւ մաս մը հրատարակած էր՝ երբ վախճանեցաւ ի Կ. Պոլիս 7 Օգոստոս 1882-ին:

Սոյն յօդուածը հաճոյքով կը սկսինք հրատարակել այս էջերուն վրայ:

ԻՄԲ.

Ա.

Գաղիկ Հեթումեան բժշկարան

Բազմերախտ Հ. Ղևոնդ Ալիշանի ՍՈՒԱՐԻՆ հրատարակութենէն ի վեր (1885) մասնաւոր ուշադրութեան և հետաքրքրութեան առարկայ էր, անոր 337րդ էջին վրայ դրուած երեք Յիշատակարաններ թժշկարանի մը, որուն համար գրուած է թէ՛ 1°. ընդօրինակուած է 1294 թուին յունար 8րդ, 2°. հրամանաւ Հերոս քաղաքին, 3°. ձեռամբ՝ ձերտի վարդ մըր տիշիի և թէ՛ 4°. Թարգմանուած է եղեր Արաբերէնէ Հայերէնի՝ «Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՅԱՂԹՈՂ ԹԱԳԱՆՈՐԻՆ ՀԱՅՈՑ ԳԱԳԱՍ»:

Այս անգամ, երբ բախտը զիս վնենտիկ կը նետէ, առաջին պարտականութիւնս կ'ըլլայ, երթալ Ս. Ղազար, թղթատել Հայ բժշկական Պատմութեան այդ պատկանելի ու թանկագին հնութիւնը, զոր